Տիգրան Սերյոժայի Հակոբյան (1966-1992թթ.)

Տիգրան Սերյոժայի Հակոբյանը ծնվել է 1966թ. մայիսի 1-ին, Երեւան քաղաքում: 1973թ. ընդունվել է Երեւանի թիվ 124 միջնակարգ դպրոցը: 1983թ. ավարտել է դպրոցի լրիվ դասընթացը: Դպրոցին զուգահեռ ավարտել է Ղուկաս Ղուկասյանի անվան գեղարվեստի տան պարի խմբակը:

1984-1986թթ. գտնվել է զինվորական ծառայության մեջ:

Ազգային Ազատագրական Պայքարի առաջին օրերին մասնակցել է շարժմանը: 1989թ. ստեղծված Նորք-Մարաշ խմբավորման կազմում էր նաեւ Տիգրանը: 1990թ. հունվարից խմբավորումն անվանվեց Նորք-Մարաշ Բարեգործական Հայրենասիրական Միություն:

1990թ. հունվարի 17-ին Տիգրանն արդեն Երասխավանում մասնակցում էր կռիվներին: Ծանր օրեր է ապրել Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղի համար մղվող պայքարում: Եղել է Շահումյանի շրջանի Մանաշիդ, երքեջ գյուղերի համար տարվող մարտերում: Տունդարձի ժամանակ, երբ մի քանի օրով հեռու էր լինում մարտի դաշտից, Ազգային Ազատագրական Պայքարի քաջ մարտիկը զբաղվում էր Նորք-Մարաշ Բարեգործական Միության ստանձնած գործով՝ Մարաշի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու կառուցմամբ:

Եկեղեցու հիմքը դրվել է 1990թ. օգոստոսի 18-ին. այդ իսկ օրվանից Տիգրանը դառնում է հիմնադիրներից մեկը եւ իր պարտքն է համարում օրվա մի զգալի մասը նվիրել այդ սուրբ գործի կատարմանը:

1971թ. Տիգրանը կորցրել էր մորը, ու ավագ քույրը՝ տասնամյա Ելենա Հակոբյանը իր ուսերին է վերցրել Տիգրանին եւ մյուս եղբայրներին ու քույրերին մեծացնելու գործը: Ավագ քրոջ ձեռքերում մեծացած Տիգրանը կռվի դպրոցում հերոս էր, ընտանիքի զավակը դարձել էր հայրենիքի զավակ:

Հայրենիքի հանդեպ պարտքը Տիգրանին մղել էր թեժ կռիվների իր իսկ ծննդյան օրը, 1992թ. մայիսի 1-ին: Կռվի դաշտում գտնվելու 43-րդ օրը, երբ Երքեջում ծանր պայքար էր մղվում ադրբեջանցիների կրակակետը ոչնչացնելու եւ հանդիպակաց բարձունքը գրավելու համար, Տիգրանն ընկավ, բայց միայն այն պահին, երբ բարձունքն արդեն գրավված տեսավ: Տիգրանի հանդեպ ճակատագրի հեգնանքը այնպիսի արտահայտում գտավ, որ ծննդյան 26-րդ տարեդարձի օրը կնքվեց նրա մահկանացուն:

Եվ բնական էր, որ Տիգրան Հակոբյանը հուղարկավորվեց իր իսկ հիմնադրած եկեղեցու բակում՝ իր սուրբ գերեզմանով դառնալով Ազատագրական Պայքարի ելած ժողովրդի եւ մարտիկների երդման առհավատչյա: Հայաստանի ազատության համար պայքարի ելած մարտիկի անշահախնդիր եւ հերոսական արարքը մշտապես կհիշվի յուրաքանչյուր հայի սրտում՝ առաջացնելով հերոսական ոգի, ափսոսանքի խոր զգացում քսանվեցամյա երիտասարդի անկատար երազանքների համար: